ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
13 դեկտեմբերի 2018 թվականի N 306-Ա

«ԱՆԳԵՂԱԿՈԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և 19-րդ հոդվածով, համաձայն «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի կանոնադրության 3-րդ մասի 18-րդ կետի 3-րդ ենթակետի՝

կ ա ր գ ա դ ր ու մ ե մ.

1. Սուսաննա Հովասափյանին 2018թ. դեկտեմբերի 17-ից նշանակել «Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը՝ ազատելով նրան «Դարբասի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք՝ Ս. Հովասափյանի անձնական դիմումը:

2. Ընկերությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Համբարձումյան Հերմինե	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Թադևոսյան Արմեն	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Գրիգորյան Տիգրան	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ
Գրիգորյան Անիկ	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող
Հովասափյան Սուսաննա	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

4. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13.12 2018

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

2018թ. դեկտեմբերի 13
ք. Կապան